ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Շվեյցարիայի Համադաշնություն (ժնև) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

   Դավիթ Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, 2025 թ. ապրիլի 1-ից 4-ը

4. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Կայուն զարգացման նպատակների (SDG) իրականացման վերաբերյալ ՄԱԿ-ի տարածաշրջանային համաժողովին՝ միջազգային համագործակցության և փորձի փոխանակման նպատակով, բանախոսություն հիմնական և կողմնակի միջոցառումներում:

6. **Քննարկված թեմաները.**

   - Կայուն զարգացման նպատակների իրականացման առաջընթաց (SDG 3, 5, 8)
   - Կանանց տնտեսական հզորացումը թվայնացման միջոցով;
   - Սոցիալական ներառման բարելավում, մարդկանց տեղահանման և վերաինտեգրման քաղաքականություն;
   - Գենդերային հավասարության ապահովում և կանանց իրավունքների պաշտպանություն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Բանախոսական ելույթով հանդես եմ եկել UNECE SDG համաժողովի պլենար նիստին՝ ներկայացնելով ՀՀ առաջընթացը SDG-ների ուղղությամբ և ապագա ծրագրերը;
- Մասնակցել եմ պանելային քննարկմանը (հարակից միջոցառում)՝ “Bridging the Digital Gender Divide for Women’s Economic Empowerment” թեմայով. Խոսել եմ թվային հարթակներում կանանց հնարավորությունների ընդլայնման, կրթության, ՏՀՏ ոլորտում մասնակցության խթանման հարցերի շուրջ;
- Մասնակցել եմ SDG 5 (Գենդերային հավասարություն) թեմայով համաժողովում, որտեղ ներկայացրել եմ ՀՀ-ում իրականացվող ռազմավարությունները և ծրագրերը, որոնք ուղղված են կանանց իրավունքների պաշտպանությանը, տնտեսական հզորացմանը և աշխատանքային հավասար հնարավորություններին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել: Ելույթներում շեշտադրել եմ Հայաստանի պատրաստակամությունը՝ շարունակել միջազգային համագործակցությունը և ներկայացվել են գործող ռազմավարություններն ու դրանցից բխող գործողությունների ծրագրերի կատարման հանձնառության և կարևորության մասին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Ընդլայնել միջազգային համագործակցությունը՝ կանանց տնտեսական հզորացման ուղղությամբ, մասնավորապես՝ ՏՀՏ ոլորտում;
- Աջակցել թվային գրագիտության բարձրացմանն ու ձեռնարկատիրական նախաձեռնություններին կանանց շրջանում;
- Համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ՝ թվայնացված գործիքակազմի ներդրման նպատակով՝ սոցիալական պաշտպանության, աշխատանքի և կրթության ոլորտներում;
- Ընթացք տալ Գենդերային քաղաքականության ռազմավարության վերջնականացմանը՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը: **14.04.2025**

Recoverable Signature

X

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ
2401820493

2025-04-15 11:05:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

Signed by: DAVIT KHACHATRYAN 2401820493